

գին յանապատի Ղազար Արհի Եպիսկոպոսն Պոնտոսի, ի մեծն Հռոմ վասն նորաշէն վանուցն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին սրբոյն Պետրոսի ի վաթիւքան թվին մարմնառութեան Փրկչին 1764 Մայիսի 15: Որ է ընդ հովանեաւ եկեղեցւոյն սրբոյն Պետրոսի ի վաթիւքան: Իսկ 1766ին Անքոնա էր (թղթ. Պետրոս տի Գաբրիէլի Ղայսէրլի, գրեալ 7 Յունիս 1766 յԱնքոնա առ Հ. Գր. վ. Նիսիօթ ի Հռոմ. Դիւ. Անտ.):

Ահաւասիկ իր եպիսկոպոսական ձեռնադրութեան կոնգակը.

Յիսուսի քրիստոսի ծառայ Տէր Ղազար կաթողիկոս առաքելական Եկեղեցւոյն քրիստոսի, եւ յաջորդ սրբոց Առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի, եւ մեծի Հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. եւ ծայրագոյն Պատրիարկ Վաղարշապատու քրիստոսահիմն եւ աստուածակառոյց երկնահանգէտ եւ տիեզերական սրովբէաճեմ եւ քրովբէապար, ագինասարաս եւ արեգակնաքատակ Աթոռոյս սրբոյն Էջմիածնի, եւ ամենայն Հայոց: Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան. Շնորհք առաքելական, եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւնն. եւ նախախնամական գթութիւնն ի վերայ տիրապահ եւ աստուածախնամ օրհնեալ ծովահանաց քաղաքիդ Տրապիզոնու. նաեւ քրատոնու, Իրիզայու, եւ այլ ամենայն գիւղորէից բոլոր թեմի. եւ վիճակի դորին. եւ ի միջի դոցին կառուցեալ եւ հաստատեալ սրբոց եկեղեցեաց եւ եկեղեցականաց մանկանց. սրբանուէր եւ երկնահրաւէր քահանայից, սարսափելի խորհրդոյն սպասաւոր սարկաւագաց. պերճապատիւ եւ փառաղարգ